

Այս համարում

Հայերեն բաժին

1- Լուրեր – Իրանահայ համայնք	1
2- Լուրեր – Հայաստան.....	3
3- Լուրեր – Իրան.....	9
4- Զանազան.....	9
5- Խոհեր.....	10

Սյունակների սղության պատճառով
Հրաշխ Աճառյանը Պարսկաստանում
Եւ Հայ իհն գրականություն Խոդվածների շարունակությունը
կտպագրվի հաջորդ համարում

Պարսկերեն բաժին

1- Լուրեր - Իրանահայ համայնք	1
2- Լուրեր-Իրան,Հայաստան.....	2


Շապիկի առաջին Էջում՝
700 զույգերի ամուսնությունը Արցախում

Շապիկի Վերջին Էջում՝
Կարլեն Դալլաքյան

Համար 146, Սեպտեմբեր-Հոկտեմբեր 2008թ.

No. 146, September-October 2008

ماهنه لویس - شماره ۱۴۶ مهر ماه ۱۳۸۷



Վաևիկ Բաղդասարյան

Պրանակայ Համայնք

**Թ.Հ.Թ.-ի Պատգամավորական Ժողովի
14-րդ շրջանի ընտրությունները
մամլո ասուլիս**

2008թ. հոկտեմբերի 4-ին ԹՀԹ-ի ՊՃ-ի 14-րդ ընտրաշրջանի Կենտրոնական Ընտրական Հանձնաժողովը թերթանի հայկական մամուլի Ներկայացուցիչներին հրավիրել էր հանդիպում-ասուլիսի: Ասուլիսը կես ժամ ուշացումով սկսվեց՝ հուսալով, որ մյուս լրատվամիջոցներից նույնաւ կներկայանան, սակայն նոր եկողներ չեղան և ասուլիսն անցնացվեց 4 հոգով (ԿԸՀ-ի ատենապետ ժորժ Աղազարյանը, «Լույս» ամագրի և «Ալիք» օրաթերթի Ներկայացուցիչները):

Պր. ժ. Աղազարյանը ներկայացրեց ԹՀԹ-ի կողմից կանքի կոչված Կենտրոնական Ընտրական Հանձնախմբի 11 անդամների անունները, որոնք էլ իրենց հերթին կյանքի էին կոչել քաղաքանակային Ենթահանձնախմբեր: Ծանոթացրեց ընտրական ժամանակացուցիչն, նշեց նաեւ ընտրության հետ կապվող որոշ մանրամասներ: Օրինակ, եթե քաղաքանասում թեկնածուների թիվը շատ է, ապա վիճակահանությանը կորոշվի, թե ուկեր ներկա կլինես ըվեատուիի մոտ, քանի որ նրանց թիվը սահմանափակ է լինելու: Իսկ թեկնածուները քվեների հաշվարկման ժամանակ կարող են որպես դիտորդ ներկա գտնվել տեղանասում: Այնուհետև պր. Աղազարյանը պատասխանեց մամուլի ներկայացուցիչների հարցերին:

«Ալիք»- Քվեատուուիկերի մոտ ասացիք վիճակահանության ձևով են ներկայանալու հսկչները. մի քիչ ավելի մանրամասն բացատրեց ինչպես է լինելու:

Պ.- Վիճակահանության ձևով միայն թեկնածուների ներկայացուցիչների համար է նախատեսված: Եթե մի քաղաքանասում մի քանի քենակություն կա, հանձնախումբը 7 հոգանոց կազմ կը նշանակի, որում ներկա կը լինեն նաև Ենթահանձնախմբի անդամներից 2-3 հոգի:

«Լույս»- Ինչ կարգով է ընտրվել Կենտրոնական Ընտրական Հանձնախումբը և ինչ հիմնանքներով:

Պ.- Թեմի կանոնադրության համաձայն Թեմական Խորհրդություն նշանակում է հանձնախումբ, որի անդամները բնակվում են տարբեր քաղաքանասերում: Թե ինչ հիմք են ընդունել ես չգիտեմ:

«Լույս»- Ուղղակի նշանակովի հանձնախումբ է եղել, այո՞:

Պ.- Իրենց ծանոտության բերումով է եղել, տեսել են այն մարդիկ հարմար են, նշանակել են:

«Լույս»- Իսկ ենթահանձնախմբերն ի՞նչ կարգով են ընտրվել:

Պ.- Նոյն կարգով՝ ինչպես ԿԸՀ-ն է ընտրվել: Օրինակ, եթե տվյալ քաղաքանասից եղել են ԿԸՀ-ի մեջ, ապա նրան խնդրել են, որ անհանդ առաջարկի բոլոր կարույցները լինի:

«Լույս»- Պարզվում է, որ նշանակովի ԿԸՀ-ը նշանակում է Ենթահանձնախմբեր և այդ նշանակովի մարմինները չեն կարող ընդորկել համայնքի բոլոր կառույցները: Օրինակ առաջադրվել է իմ թեկնածությունը Սասուն քաղաքանասում, սկզբան չի ընդունվել, ինչո՞ւ:

Պ.- Ոժքախտաբար ես այդ ժամանակ ճամբորդության մեջ էի և հանձնախմբերը ընտրված էին և ես բան չունեմ իսելու և իմ համաձայնությունը տվեցի և ցանկը ուղարկեցինք Թեմ-ին հաստատելու համար:

«Լույս»- Նախկինում պատգամավորների քանակը 56 հոգի էր, իսկ իհնա լսել ենք, որ համայնքի նվազման պատճառով փոխվել է և դարձել 45 հոգի: Ի՞նչ փոփոխություններ կան և ովքեր են որոշում դրանք:

Պ.- Ենթա է 56 հոգի է եղել, բայց բնակչության թիվը նվազել է: Մեծ մասը գաղթել է Եվրոպա, Ամերիկա, շատ չնչին՝ աննշան տոկոսը զնացել է Հայաստան: Մյուս կողմից քաղաքանասերում տեղաշարժ է եղել: Յիմա մեր ժողովորդի թիվը չորս տարի առաջվա թիվը չի: Սրա իհնան վրա և ըստ ԹՀԹ-ի կանոնադրության, որ յուրաքանչյուր 2000 հոգու դիմաց նեկ պատգավոր պետք է լինի, ԿԸՀ-ը առաջարկ է ներկայացրել Թեմ-ին, սակայն արդյունքի մասին տեղյակ չենք, եթե որևէ բան պետք է փոխվի, Վստահաբար Պատգամավորական ժողովի և Թեմական Խորհրդի հաստատումը պետք է ունենա:

«Լուս»- Կարծում ենք այդ հարցի վերաբերյալ ԿԲՀ-ը պետք է նկատի առնի նաև պետական վիճակագրական և քահանակայրերի ներկայացուած տվյալները:

Պ.- Մենք առաջմ 2000 հոգու վրա պետք է կենտրոնանանք, մինչև նոր փոփոխություն լինի:

«Լուս»- Քանի ընտրատեղամաս է լինելու և որտե՞՞զ: Խորհրդարանի ընտրությունների ժամանակ Դայոց «Ավետիսյան» բուժարանը ընտրակենտրոն էր դարձվել: Մի տեղ, որտեղ իշխանություն են այցելում և աշխատողները ներկա են կարելի է արդյոք ընտրություններ անցկացնել: Վրյո՞ք այս ընտրությունների ժամանակ նոյնը չի լինելու:

Պ.- Դոյս ունեմ, որ չի լինելու: Նախկինում Սասուն քաղաքամասում երեք կենտրոն է եղել «Թունյան» և «Թովովայսյան» դրագոնները և Ս. Թարգմանչաց եկեղեցին: Պետական ընտրությունների ժամանակ այդ չորորդը մենք նշանակեցինք, որովհետև մարդիկ կային, ասում են, որ վերևից ժողովուրդը դժվարանում է ցած գալ և այլն: Մասսամբ էլ, ճիշտ է, համաձայն են ծեզ հետ, որ բուժարանում մարդիկ գնում գալիս են և ընտրությունները խանգարվում են: Վերջնական չենք ճշտել, բայց շատ փոփոխություններ չպետք է անենք:

«Լուս»- Դոյս նշեցիք, որ հոկտեմբերի 2-ից ենթահանձնախմբերը պետք է աշխատեին, և թեկնածուները կարող են դիմել գրանցվելու համար, սակայն այդ օրը Ս. Թարգմանչաց եկեղեցուն ենթահանձնախումբը ներկա չի եղել: Կրյոյ տեղյալ եք, թե ինչո՞ւ:

Պ.- Վաղը մենք նիստ ունենք և կարծարեն այդ հարցը, որովհետև, եթե հայտարարություն ենք տվել, պետք է կանոնավոր աշխատեին:

«Լուս»- Նախկինում քվեաբերիկների հաշվարկման ժամանակ մի տեղամամասում, որտեղ մեկ քվեատուփ կար, մի քանի մասի են բժանում քվեաբերիկները և մի քանի տեղ հաշվում, որպեսզի իրենց ասությամբ, շուտ ավարտվի հաշվարկումը, իսկ թեկնածուների ներկայացուցիչները չեն կարողանում լիարժեք հսկողություն ունենալ: Սա նոյնպես չի լինելու այս անգամ:

Պ.- Ի նկատի կառնենք: Վերջին հաշվով սա գալիս է նրանից, թե ինչքան ենք նարկանց վստահութեան այն անհատներօց են, որ բոլորին վստահում են, մի թե, որ հայտառակը փաստվի:

«Լուս»- Թեկնածուները ի՞նչ իրավունքներ ունեն և ի՞նչ նորություններ կան այս կապակցությամբ: Թեկնածուների նկարները ի՞նչ չափերի է լինելու:

Պ.- Այդ մասին էլ, ես հոյս ունեմ, մյուս մեր հարցագրությի ժամանակ կասեմ, որովհետև, դժբախտաբար, մենք անցած շաբաթ նիստ չենք ունեցել և վաղվա մեր նիստում այդ էլ կը հստակեցնենք, հատկապես որ դեռևս պրոպագանդայի համար ժամանակ կա: Կարող եք կապվել նաև գրասենյակ և տիկ: Սարինեցից պատասխանները հմանալ:

«Ալիք»- Մի թե՞ մեր և ներքին Գործերի Նախարարության ընտրակարգը նոյնը չէ:

Պ.- Մոտավորապես նոյնը է և մեծ հավանականությամբ նոյն կարգը կը լինի:

«Ալիք»- Պետության ներկայացուցիչներն էլ լինելու ե՞ն քվետուփերի մոտ:

Պ.- Այս, ՆԳՍ ներկայացուցիչները լինելու են, կիմի նաև քահանայաց դասից մեկ հոգի, և հանձնախմբի ամրաներ և թեկնածուների վստահված անձիք: Իսկ, եթե թեկնածուն ինքը ցանկանա, կարող է քվեաբերիկների հաշվարկման ժամանակ ներկա գտնվել:

«Լուս»- Ընտրողների տարիքը 18-ից է լինելո՞ւ:

Պ.- Այս, համաձայն ազգային կանոնագրի՝ 18 տարեկանից է լինելու:

«Ալիք»- Շրջանների համար ի՞նչ է որոշվել:

Պ.- Շրջաններում թիվը թիվ է և մենք հանձնարարել ենք Եկեղեցականությունը, որ ընտրություն անցկացնի:

Կան շրջաններ, որտեղ 2-3 ընտանիք են մնացել, օրինակ, Մաշհար, Դամադան, Թերմանշա: Դիմել ենք թխ-ին որ այդ շրջանները միասին մեկ ներկայացուցիչ ունենան խորհրդական ծայնով:

Թղթակից: Սուսաննա Դամբարյան

Դաշնակցության կոչտ մոտեցումը ԹՇթ-ի Պատգամավորական Ժողովի ընտրությունների նկատմամբ

Պատգամավորական ժողովի ընտրությունները կատարվում են չորս տարին մեկ անգամ, սակայն մինչև 2000 թվականը մի շաբաթ հանգամանքների բերումն չուրջ 14 տարի ընտրությունները տեղի չին ունեցել և մի շաբաթ աշխատանքներից հետո հաջողվեց նոր ընտրությունները անց կացնելու իրավունքը ձեռք բերել, որտեղ բոլոր կողմերի մասնակցությունը անհրաժեշտ էր նկատվում: Երկու շրջան ընտրությունների տեղի ունեցան և այդ երկու շրջանների ընթացքում նկատվեց, որ դաշնակցությունը կորցնում է իր մենատիրությունը Պատգամավորական ժողովում և դժվարանում է անցյալի նամակ իր ծրագրերը իրականացնել անդամ անհրաժեշտ էր լինում գնալ երկխոսության և երեմն չէր կարողանալ հանգիստ և ժամանակին իր քայլությունը վերցնել և ստիպված էր լինում ենթարկվել ժաղովադարձական կանոններին, կամ էլ հենց լորդմից կողմից ընդունված թՇթ-ի կանոնադրությանը, որը երեմն ձեռնտուուլու չի լինեն:

Վեր նշված պայմանների բերումն նկատվում է, որ 14-րդ Պատգամավորական ժողովի ընտրություններում որդեգրել է կոպիտ և կոչտ քաղաքականություն և նպատակ է հետապնդում մի կողմից դմել իր ուժեղ ընդդիմադիրներին: Թեմական խորհրդի կողմից ընտրվել է Ընտրությունների Կենտրոնական Յանձնախումբ, որի մասին տեղյակ չի պահպել հանայնքին, կուսակցությունը նշանակել է մի շաբաթ անձանց, որոնք պետք է պահպանված կուսակցությամ միակողմանի մոտեցումները ընտրությունների ընթացքում: Պատահականորեն միայն մեկ հոգի ոչ կուսակցական անդամ է նշանակվել Կենտրոնական հանձնախմբում, իսկ ենթահանձնախմբում մերժվել է ոչ կուսակցական թեկնածուների առաջարկվելու:

Ի՞նչ հետևանքներ կարող է ունենալ նման անհանդուժողական վերաբերնումը համայնքում: Արտագաղթի այս պայմաններում ավելի շատ հուսախառնությունների տեղիք է տալու դաշնակցության անհարդուժողականությունը, սակայն կարծես դաշնակցության համար ոչ թե արտագաղթի կամ համայնքի հարցեն են, մի գեր խնդիր, այլ իր իշխանության ապահովումը մեր նվազող համայնքի որոշ կառուցներում: Մի գուցե դաշնակցության գոյությունը հրամանում կարող է նրամից և նրանը չեն կարող իրավաբեր որոշ քայլերից: Դաշտու հետևանքը կարող է այն լինել, որ ընդդիմադիրները բոյկոտի ենթակեն ընտրությունները և չնախանակցեն ընտրություններին, որի արդյունքում Պատգամավորական ժողովի արժեքը և դիրքը իշնելու է համայնքի անդամների և պետության նոր, որը ձեռնուու չեն մեզ բոյկոտի, սակայն անհանդուժողականության շարունակության դեպքում, կարծես ենք, նման մի քայլ գնալը ունալ իրականություն կարող է դառնալ: Այդ դեպքում Պատգամավորական ժողովը ոչ օրինական մի մարմին է ճանաչվելու համայնքի մի մաս անդամների կողմից:

ԹՇթ-ի Պատգամավորական Ժողովի 55-րդ նիստը

Պատգամավորներին ուղղված հրավերին կից ներկայացված էր թեմական խորհրդի նամակը, որը դարձավ Պժ-ի օրակարգ: Պժ-ի որոշ միաստերի քվորում չունենալը և միաստերի զգոյանալը բացասական է ազդում թեմ-ի ծրագրերի հրականացման գործին և մեն-մ թենարկել է այդ հարցը օգոստոսի 27-ի իր նիստում և միաձայնությամբ հարցար է գտել ներկայացնել հետևալ հարցերը դիմանի և Պժ-ի ուշադրությամբ 1- թեմ-ն իր պարտավանությունները կատարելու և ծրագրերը իրականացնելու համար ոչ մի այլ ընտրանք չի տեսնում բացի մշշանական անդամների կողմից: Պատգամավորական ժողովը ոչ օրինական մի մարմին է ճանաչվելու համայնքի մաս անդամների կողմից:

և գրասենյակային գործառնությամբ վարձու տալու համար: Այս աշխատանքը պատրաստ է սկսելու համար: 2- Հանգուցյալ բարերար Եւգին Արքումանյանի կալվածի (Էնդելար պողոտա) վրա կառուցվելիք շենքը, վաճառականական և գրասենյակային գործունեությամբ վարձու տալու համար: Սպասվում է այս աշխատանքը սկսել մինչև 6 ամիս: 3- Վաճառելով հանգուցյալ բարերար Վանիա Սողոմոնյանի Զումհուրի պողոտայի վրա գտնվող կալվածը համարժեք այլ հողամաս գնելով հարմար վայրում և կառուցվի վաճառականական և գրասենյակային գործունեությամբ շենք վարձու տալու համար: Այս կալվածների վրա կառուցած շենքերի վարձի հատույքը կը բավարարի թեմական խորհրդ բացը լրացնելու:

Թես-ն իր նամակում շեշտում է, որ, չնայած բազմից Պատգամավորական ժողովի նիստերի ժամանակ խոսվել է վերը նշված ծրագրերի մասին, այս ծրագրերի վերջնական հաստատումը ախտի քնարկեր ՊԺ-ի 26 օգոստոսի նիստին, սակայն քվերում չունենալու պատճառով տեղի չունեցավ:

Նախկինում ՊՃ-ն վավերացրել էր Թունյան դպրոցի, ներառյալ Սասուն մանկապարտեզի, կապիտալ վերակառուցումը և Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցուն կից կալվածի գնումը: Այս ծրագրերը իրականացնելու համար միակ նյութական աղբյուրը «Զանգ» ընկերության շենքի վաճառքն է, որի վաճառքի որոշ դժվարություններ դեռ չի հաղթահարվել և հաղթահարվելու դեպքում նույնիսկ չի բավարարեն այդ ծրագրերը իրականացնելու համար, ուստի Թես-ն անհրաժեշտ էր համարում նախկին «Արամ» դպրոց-սրահի վաճառքը որպեսի հնարավոր լինի համայնքի հաստիքաբեր ծրագրերի կողմից նաև գնել հաստատում ստացած կալվածներ՝ Թունյան դպրոցի շենքը: Այս հարցը երկար քնարկվեց ու տարբեր երկխոսություններ տեղի ունեցան և վերջապես քվեարկություն եղավ և հաստատվեց «Արամ» դպրոց-սրահի վաճառքը, որի միակ գնորդը քաղաքապետարանն է լինելու:

«Կայոց բուժարանը որպես ներդության շտաբ»

Քանի ամիս առաջ Իրանի խարիզարանում հայ պատգամավոր ընտրելու համար ԹՅԹ-ի կողմից կյանքի կոչված ընտրական հանձնախումբը, Իրանի կամ մի գուցե աշխարում առաջին անգամ, բուժարանը դարձրեց ընտրելու վայր: Սա բնորոշ է միայն մեր համայնքի դաշնակցությանը, որը պատրաստ է իր իշխանության համար ամեն քայլի դիմի և ամեն ինչ զոհաբերի, միայն թե չկորցնի իր իշխանությունը համայնքում: Բազմաթիվ դպրոցներ և եկեղեցներ կան, որորնք հանդիսանում են ընտրության հարմար վայր և միշտ օգտագործել են դրանք, իինա ո՞ր անհրաժեշտությունից ենելով Թեմական Խորհուրդը և ընտրական հանձնախումբը օգտագործում աշխատող բուժարան, որտեղ հիվանդները և դիմողները անընդհատ անց:

Մոտ ապագայում պետք է տեղի ունենան 14-րդ Պատգամավորական ժողովի ընտրությունները համայնքում, հույսով ենք, որ մեր հարգելի թեմական խորհրդը նկատի կարենի այս հարցը, որպեսի ավելորդ դժվարությունների տեղիք չտա և չվնասի մեր համայնքի միասնական արժեքները:

40-րդ Համահայկական Խաղեր

2008 թվականի սեպտեմբեր ամսին տեղի ունեցավ Հ Ս Ս «Արարատ» կազմակերպության 40-րդ համահայկական խաղերը: Խաղերը տևեց 10 օր, խաղերին մասնակցել էին Իրանի տարբեր հայկական միություններից, Հայաստանի Երևան և Գյումրի քաղաքներից, Արցախից և Վրաստանի Ախալքալաք քաղաքից մարզիկ և մարզկուհիների որոնք, մրցում էին տարբեր մարզաձևերում:

ՀԱՄ «Րաֆֆի» համալիրից մասնակցել էին տղայոց և օրինորդաց երիտասարդական բասկետբոլ, տղայոց երեց բասկետբոլ և տղայոց երիտասարդական և երեց Ֆուտբոլ մարզաձևերում մարզիկ և մարզկուհիներ, որոնցից տղայոց երիտասարդական բասկետբոլ և Ֆուտբոլի երկու խմբերը այս խաղերում գրավեցին առաջին տեղերը: Շախմատի խմբային բաժնում «Րաֆֆի» համալիրի շախմատիստները գրավեցին առաջին տեղը: Շնորհավորում ենք «Րաֆֆի» համալիրի

մարզիկներին և առավել հաջողություններ ցանկանում նրանց և բոլոր մարզիկներին:

Թղթակից: Դումին Սաֆարյան

Հայաստան

2009ի բՅՈՒԺԵՆ ԿԿԱԶՄԻ ԱՎԵԼԻ ՔԱՆ ՅԼՐԴ ՂՈԼԱՐ

ՄԱՍ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

2009-ի պետական բյուջեի նախագիծը երեկ հաստատեց կառավարությունը եւ ուղարկեց Ազգային ժողովի քննարկմանը: Երկիր գլխավոր ֆինանսական փաստաթղթի մասին կառավարության նիստից հետո լրագորդներին մանրամասներ հաղորդեցին ֆինանսների նախարար Տիգրան Ղավրյանը եւ փոխնախարար Պավել Սավարյանը:

Ինչպես նշեց Տիգրան Ղավրյանը, բյուջեի նախագծի հիմքում դրված են մի քանի առանցքային փաստաթղթեր՝ կառավարության գործունեության 2008-2012 թվականների ծրագիրը, աղքատության հաղթահարման ռազմավարական ծրագիրը (Վերանվանված կայուն զարգացման ծրագիր), ինչպես նաև ֆինանսների նախարարության եւ Կենտրոնական բանկի մասնագետների մակրոտնտեսական կամաստեսումները, միջազգային ֆինանսական կառույցների փորձագետների եղողակացությունները:

Այսպիսվ, ըստ բյուջեի նախագծի, եկող տարի կանխատեսվում է համախառն ներքին արդյունքի (ՀՆԱ) 9,2 տոկոս ամ: Միաժամանակ, բյուջեով նախակարգվել է ունենալ ցանց 4 տոկոս գումարած կամ հանած 1,5 տոկոս: Նման ցանց գնաճի համար, ֆինանսների նախարարի հավասարմանը, ստեղծվել են բոլոր նախադրյալները: Մասնավորապես, եկող տարի ծրագրում է 1 տոկոսից եւ ցանց բյուջեի դեֆիցիտ (պակասուրդ), որը հնարավորություն է տալիս զայելու գնաճային ճնշումները:

ՀՆԱ-հարկեր հարաբերակցությունն ավելանալու է 0,4 տոկոսային կետով եւ կազմելու է 17,4 տոկոս: Այս տարի այդ ցուցանիշը կկազմի 17 տոկոս: Համախմբված բյուջեն, որը ներառում է նաև համայնքային բյուջեները, եկամտային մասով կկազմի 927,1 մլրդ դրամ, ծախսային մասով՝ 967,1 մլրդ դրամ:

1 շնչին ընկնող ԸՆԱ-մ տարեկան՝ 4300 դոլար

Ինչ վերաբերում է պետական բյուջեին, ապա 2009-ին եկամուտներն այստեղ կկազմեն 905 մլրդ դրամ, որը դուրսային արտահայտությամբ ներկայի փոխառուով փոքր-ինչ բարձր է 3 մլրդ դոլարից: Ծախսային մասը կկազմի 945 մլրդ դրամ: Դեֆիցիտը կկազմի 40 մլրդ դրամ, որի 30 մլրդ դրամը կծածկվի ներքին աղբյուրների, մնացած՝ արտաքին աղբյուրների հաշվին: Ընդ որում, 2008-ի բյուջեի եկամտային մասի 746 մլրդ դրամի համենատ, 2009-ի բյուջեի եկամտային մասն ավելացնել է 24 տոկոսը, իսկ 945 մլրդ դրամ ծախսային մասը՝ 2008-ի 822 մլրդ դրամի միունքներում՝ 13 տոկոսով: 2009-ի բյուջեի եկամտային մարզաձևերում կկազմեն ՀՆԱ 21 տոկոսը, ծախսերը՝ 22,7 տոկոսը, իսկ դեֆիցիտը՝ 0,96 տոկոսը: 1 շնչին ընկնող համախառն ներքին արդյունքը 2009-ին կկազմի 4300 դոլար: Եկող տարի սպասվում է 4 տրիլիոն 169 մլրդ դրամ համախառն ներքին արդյունք, այս տարվա բյուջեով նախատեսված 3 տրիլիոն 520 մլրդ դրամի համախառն ներքին արդյունքի փոխարեն:

905 մլրդ եկամտային մասից 726 մլրդ դրամը կկազմեն զուտ հարկային մուտքերը, 128 մլրդ դրամը սոցիալական ապահովագրության վճարները:

Տիգրան Ղավրյանի հավասարմանը, եկող տարվա բյուջեն սոցիալական ոլորվածության ուղղված միջոցները:

Նախարարին ուղղված «Ազգի» առաջին հարցն այն էր, թե որքա՞ն են կազմելու պաշտպանությանը հատկացված ծախսերը: Դրան ֆինանսների նախարարը պատասխանեց, որ պաշտպանության ուղղություն նիստին ինդիանարան հատկացվելու է 149 մլրդ դրամ, իսկ միայն նախարարությանը՝ 144 մլրդ դրամ: Դա

կազմուն է ՀՆԱ 3,5 տոկոսը եւ 24 մլրդ դրամով կամ մոտ 20 տոկոսով ավելի է 2008-ին պաշտպանության նախարարությանը հատկացված 120 մլրդ դրամից:

Մեր հաջորդ հարցն այն էր, թե եկող տարի ակնկալվող գագի, էլեկտրաէներգիայի եւ ջրի սակագների բարձրացնան առնչությամբ չկա՞ն անապահով խավի համար նախատեսված սոցիալական կոնկրետ ծրագրեր, Տիգրան Դավթյանը պատասխանեց, որ առանձին ծրագրեր չկան եւ ամեն ինչ նախատեսվում է իրականացնել ընդհանուր սոցիալական ծախսերի շրջանակում: Իսկ սոցիալական ծրագրերին, պատասխաննելով լրագրողների հարցերին, ավելի նարանաս անդրադարձ փոխնախարար Պավել Աֆարյանը:

Ֆիճանաների փոխնախարարը հայտնեց, որ թեւ այս տարվա ծրագրում չկա քաղաքայողների եւ բարձրաստիճան ծառայողների աշխատավարձերի ավելացման որոշում, բայց կախված ստաժից, դասային աստիճաններից բարձրացումներ կլինեն, իսկ ընդհանուր առնամբ քաղաքայողների նիշին աշխատավարձն այս տարի կրաքարանա 6 տոկոսով:

Կենսաթոշակները կրաքարանան 17,5 տոկոսով

Մշակույթի ոլորտի աշխատողների աշխատավարձը հունվարի 1-ից կրաքարանա 10 տոկոսով: Այս տարվա հունիսից նրանց աշխատավարձը բարձրացել էր 20 տոկոսով:

Ոստիկանների միջին աշխատավարձը կրաքարանա եւ կիավասարվի քննիչների միջին աշխատավարձին: Դրա համար բյուջեից լրացրուցից 900 մլն դրամ է հատկացված: Կորուկ՝ 40 տոկոսով բարձրանալու են հարկային համակարգի աշխատողների աշխատավարձերը, ինչի համար հատկացվել է 1 մլրդ դրամ: Եկող տարի Յայաստանում նվազագույն աշխատավարձը կրաքարանա 30 հազար դրամը, այս տարվա 25 հազար դրամի փոխարեն: Բարձրանալու են նաև ուսուցիչների եւ դպրոցների վարչական աշխատողների աշխատավարձերը, ինչպես նաև բուժիմնարկներում 1 հիվանդի համար հատկացվող գումարը:

Կենսաթոշակները եկող տարվա հունվարի 1-ից կրաքարանան միջինը 17,5 տոկոսով: Ներկայիս 21800 դրամ միջին կենսաթոշակը կրաքարանա 4 հազար դրամով եւ 2009-ին կիանի 25600 դրամի:

Յուրաքանչյուր 3-րդ երեխայի ծնվելուց կտրվի 430 հազար դրամ

Պավել Սաֆարյանը կարենուեց ընտանիքում երրորդ երեխայի ծննդյան կապակցությամբ ընդունված որոշումը: Համաձայն դրա, անկախ նպաստառու լինելուց, երրորդ երեխայի ծնվելուց հետո ընտանիքը կստանա 430 հազար դրամ: Իսկ 1-ին եւ 2-րդ երեխաների ծննդյան դեպքում կտրվի միանվագ 50 հազար դրամ, մինչ այժմ տրվող 35 հազար դրամի փոխարեն: Եվ վերջապես կտրուկ՝ 6 անգամ ավելացել են մինչեւ 2 տարեկան երեխաներին տրվող նպաստները: Ներկայիս ամսական 3 հազար դրամի փոխարեն կկազմի 18 հազար դրամ:

Նախագահ Մերժ Սարգսյանի շնորհավորական ուղերձը Լեռնային Ղարաբաղի Անկախության տոնի առթիվ

Երեւան, 2 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ, ԱՐՄԵՆՊՐԵՍ: Լեռնային Ղարաբաղի Անկախության տոնի առթիվ շնորհավորական ուղերձ է հղել ՀՀ նախագահ Մերժ Սարգսյանը: Ինչպես «Արմենարես»-ին տեղեկացրին ՀՀ նախագահի մամլո գրասենյակից, ուղերձում ասվում է.

«Սիրելի հայունակցներ,

Շնորհավորում են ձեզ Անկախության տոնի կապակցությամբ: Անցած 17 տարիներն ապացուցեցին, որ Արցախի ժողովորդի ընտրությունը տվյալ իրավիճակում միակ ծիցտ ուղին էր: Այդ ընտրությունը մեզ համար պատմական է, սրբազն եւ անբեկանելի: Այսօր բոլորիս տոնն է. նաև նրանց տոննը, ովքեր



անմահացան իրենց մարտական սխրանքներով՝ հանուն ազատագրված ու արժանապատիվ հայրենիքի:

Սիրելի՝ արցախցիներ,

Դուք պատվով եք բռնել թե՝ պատերազմի, թե՝ խաղաղության քննությունը եւ այսօր նվիրվել եք ազատ երկրի կարուցման ու պաշտպանության գործին: Նվիրվել եք՝ բարեկիոնելու ձեր պետական, հասարակական ու տնտեսական գործունեությունը, բարեկավելու ձեր կյանքը: Եվ ես համոզված եմ, որ Հայաստանի եւ ողջ հայության աջակցությամբ դուք լուծելու եք ներկայի խնդիրներն ու դիմագրավելու եք ապագա բոլոր մարտահրավերներին: Կրկն շնորհադրելով այս պայման տոնի առթիվ՝ մաղրում եմ խաղաղ երկինք ու հաստատուն առաջընթաց:

Ազգային ժողովի նախագահ ընտրվեց Հովհաննես Աբրահամյանը

Երեւան, 29 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ, ԱՐՄԵՆՊՐԵՍ: Ազգային ժողովի նախագահ ընտրվեց ՀՀ

անդամ Հովհաննես Աբրահամյանը: Փակ

գաղտնի քվերակությանը մասնակցած 115

պատգամանակորներից նրա օգտին քվերակել էր 110-ը, իսկ մյուս թեկնածու՝

«Ժամանակություն»

խմբակցության անդամ

Հարիսա Ալավերդյանի

օգտին՝ 5 պատգամանակոր:



Սյուռոնօրինության սրբազան արարողություն՝ Մայր Աթոռ ս. Էջմիածնում

Եջմիածին, 26 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ, ԱՐՄԵՆՊՐԵՍ: Հայրապետական շուրջով զգեստավորված Ն.Ս.Օ.Ս.Ս. Գարեգին Բ

Ամենայն

Հայոց



կարողիկոսի ձեռամբ եւ 12 եպիսկոպոսների մասնակցությամբ, ՀՀ նախագահ Մերժ Սարգսյանի, ԼՂՀ նախագահ Բայրու Սահակյանի, ՀՀ վարչապետ Տիգրան Սարգսյանի, Սահմանադրական դատարանի նախագահ Գագիկ Հարությունյանի, պետական այլ բարձրաստիճան այրերի, սրբալոյս Սյուռոնի օրինության առթիվ ս. Էջմիածին ժամանած

միջեւելեցական 12 պատվիրակությունների, արտասահմանյան դիվանագետների, միջազգային տարրեր կազմակերպությունների ներկայացուցիչների, հոգեւորականության, սփյուռքահայ հյուրերի, հավատացյալ հոր բազմության ներկայությամբ, Վարազա սուրբ խաչի տոնին երեկ Սայր Աքոռ ս. Էջմիածնի ս. Տրդատի բաց խորանում տեղի ունեցավ Սյուռնօրինության սրբազն արարողություն:

Դրաժեշտի խորեր

ԱՌ ՄՆԱՅ «ՈՍԿԻ ԿԱՍՈՒՐՁԸ» ԿԱՐԵՆ ԴԱԼՄԱՔԵԱՆԻ

ԵՐՈՒԱՆԻ ԱԶԱՏԵԱՆ

Կարեն Դալմաքեանի կորուստով պատմութեան կանցնի ամբողջ ժամանակաշրջան մը՝ իր նկրտումներով, անկումներով եւ իրագործումներով։ Մեծ ու նշանակալից էր անոր մերդորումը հայենաներումի գործին մէջ, խորհրդանության տարիներուն։

Անկախութենն վերջ, շուկայական յարաբերութեանց սակարանին մէջ գործէ աննշան դարձած էր վիրխարի այդ անձնաւորութեան ներկայութիւնը. կարծէ նոր ժամանակները կարիքը չունեին անոր փորձառութեամ պետականութիւն կերտելու գործընթացին մէջ։ Սակայն, վերջին պահուն, յետադարձ անդրադարձումով մը թաղման պետական յանձնաժողով մը կազմելու փաստը եկալ մոռացութեան տալու ուրացման տարիները։

Դալմաքեան յանձնառու դէմք մըն էր իր գաղափարաբանութեան։ Ան համոզումով գինուորագրուած էր իրեւ հայ կոմունիստ, հաւատալով, որ այդ կերպով աւելի գործնական եւ իմաստալից կերպով պիտի կարենար ծառայել Հայաստանին, հայութեան եւ հայկական դատին, այնպէս, ինչպէս Մխիթար Սեբաստացի, Ղետոնի Ալիշան եւ միս Մխիթարեան հայրերը յարած էին կաթոլիկ ուսաւանքին, իրագործելով ամենն ակնառու գործերը ի շահ հայ մշակույթին եւ հայկական ինքնութեան պահպանութեան։

Դայաստանի անկախութենն վերջ ալ, իր վեհ ինքնամփոփումին մէջ, Դալմաքեան հաւատարին մնաց իր հաւատամբին, երբ երեկուան արէխստեր կրօնամոլ կը դառնային եւ երբ երեկուան միջազգայնականները յանկար կը դառնային ազգայնական երկու պարագաներուն ան մատնելով իրենց նակերտայնութիւնն ու պատեհապատճեռութիւնը։

Դալմաքեանի նման հայրենաստ կոմունիստներ էին նաև Կարեն Ղեմիշեան եւ Յակոբ Զարուհեան, ընդիուկ Արամի Խանճեան, որոնք յարած էին այդ գաղափարաբանութեան պարզապէս ծառայելու հայրենիքին եւ սատարելու հայոց պետականութեան։

Եթէ խորհրդային իրավակարգի բացասական բնոյթը միջազգային էր ու տիեզերական, սակայն անոր բարիքները եղան մասնակի ու տեղական, որոնցմէտ անպայման օգտուեցաւ Հայաստանը։ Խորհրդային գաղափարաբանութեան դաւանաբին վրիպանքը կը կայանար հոն, որ կը կարծը ունենալ մենաշնորհ ծննարտութեան։ Այսօր ալ շատեր կը շարունակեն խորիլ ու գործել այդ նոտածելակերպով։ Եթէ պահ մը յաջողնին ծերբազատուիլ նտածման այդ կաշկանդումներուն եւ դիտել խորհրդային շրջանը առարկայականութեն, պիտի հաստատենք, որ այդ տարիները, իրենց խորումն եւ անբուժելի վերերով հանդերձ, մեզի ընծայեցին արիթը կերտելու ոսկեդար մը մշակույթի, գիտութեան, ճարտարապետութեան եւ ազգակերտումի, որոնց մնացուկներով կը հապատանանք տակաւին այսօր։

Այս ինչ որ դալմաքեաներ եւ իրենց սերնդակիցներ յաջողեցան իրականացնել անազատ պայմաններու տակ, կարծէ թէ դեռ չենք յաջողած իրականացնել ազատ



պայմաններու ներեւել։ Այնպէս կը թուի, թէ պէտքը ունեցած ըլլայինը այդ պատութեան...»

Խորհրդային տարիները կը ներկայացնեին հակասութեանց աշխարի մը, ուր դալլաքեաններու սերունդը պիտի կորզէր բան մը հայութեան ու Հայաստանին հանար:

Դակադրութեանց ամբողջ հանդէս մըն էր այդ շրջանը, ուր Դալլաքեան համադրութեան եղուր պիտի որոնէր. եւ ան որոնեց ու գտաւ այդ եղուրը։

Իրեւ Հայ եկեղեցու գործերու խորհուրդի նախագահ Դալլաքեան պէտք է խուսանաւէր ընդմէց անաստուած իշխանութեան մը պահանջներուն եւ Հայաստանեաց եկեղեցւոյ կարիքներուն եւ ակնկալութեանց, եւ ան յաջողեան հակալուր այդ իշխանութեան մէց արժանապատիւ տեղ մը պահովել Մայր աթոռին, շահելով մնայուն բարեկամութիւնն ու հանարումը Ամենայն հայոց հայրապետ Վազգէն Ա կարողիկոսին։ Այդ կերպով Մայր աթոռի հշիանութիւնն ու հեղինակութիւնն տարածուեցան նաեւ ամբողջ սիփիւրքի վրայ, թէ նանք ջանացին ականահարել այդ հեղինակութիւնը։

Դալլաքեանին վստահուած էր նաեւ ուրիշ անկարելի պաշտօն մը, թէ նա շատ նշանակալից եւ զօրեղ խորհրդային պայմաններու համար. ատիկա Կենտկոմի գաղափարախօսական բաժնի պետի գործն էր, այլամերժ գաղափարաբանութիւնն մը, որ ուղղակի կը հակադրուէր ազգայնականին։ Եւ այդ հակադրի բնեւոններու մէց ազգայնականին այդ դարձնէր հնարար մէջ ամենայն դարձնէր հնարար եւ յաջողեցաւ զայն իրականացնելով ապահովելով ազգային ազգութիւններ՝ բնականաբար խորհրդային պայմաններուն համար ընդունելի տարագումներով։ Եշմարիտ պարադրսներ իրենց ժամանակին համար։

Այս բոլորն եւք ու անկախ Դալլաքեանի հիմնական, պատմական եւ հայրենասիրական առաքելութիւնը Սփիւրք Ջայրենիք կապերու ամրապնդման մէջ էր, իր բոլոր հետեւանքներով ու բարիքներով։

Խորհրդային իշխանութիւնը քաշած էր երկարէ վարագոյր մը արտաքին աշխարիի դիմաց. որեւ խելամիտ մարդ գիտէր թէ ամենար էր խորտակել այդ երկարէ վարագոյրը։ Սակայն Դալլաքեան գտաւ համար շրջանը շրջանցելու այդ վարագոյրը եւ հասնելու սիփիւրքին, անոր հետ հաստատելով հոգեկան ու մշակութային կապերը։

Այս մարգեն ներս ան ունեցաւ գործնական, տեսական եւ ստեղծագործական իրագործումներ։ Գործնականը ան իրագործեց Սփիւրքահայության հետ մշակութային կափի կոմիտի միջոցաւ՝ անենն ինաստալից կանուր հասաստելով սիփիւրքան օջախներուն հետ։ Խև տեսականը յաջողեցաւ իրականացնել իրեւ Ակադեմիայի սիփիւրքափութեան բաժնի վարիչ։ Տեղեկութիւններ համախմբելու աշխատանքը ան վերածեց պատմագիտական կատեգորիայի մը՝ սիփիւրքափութեան։ Եւ այսօր արդեն ձեւ ու կերպարանք ստացած է սիփիւրքափութիւնը։

Գայու ստեղծագործականին անոր բոլոր երկասիրութիւնները նույնուած կամ առնչուած էին սիփիւրքին պատմական, գրական եւ հասարակագիտական հատորներով։

Դալլաքեանի մէկ կորողային գործը նույն գրագէտին ու գործիշխն չէր յաջողած այդպիսի պատուանդան մը կանգնել։ Զօպանեանի վրայ սենեռումը ոչ արդինը էր գորգադիպութեան մը, ոչ ալ գրական նախայիրութեան մը։ Չէ՞ որ Զօպանեանին հետ ունեցաւ իր նամակագրութիւնը ողբերգական հետեւանքներ ունեցաւ էր հայրենաստ Աղասի Խանճեանի համար, որովհետեւ Զօպանեան, խորհրդային ակնոցով դիտուած բուրժուաց գրող մըն էր եւ իրեւ Հայ դատի անխոնզ նուիրեալ՝ ան պարզապէս խնկարկող մըն էր «կապիտալիստներուն» եւ «իմաբերիալիստներուն»։

Սակայն, Դալլաքեան գիտակ էր այս պատկառեի վաստակին, զոր Զօպանեան իրականացուցած էր հայ գրականութեան պատութեան մէջ, վերջանելով մեր ամբողջ միջնադարեան գրականութիւնը՝ սկսելով Թուչակեն ու հայրենիքն եւ բարգանութիւններով՝ զայն ներկայացներով էր գրականութիւններու հայրագիտականութեան։ Բացի իր սեփական աշխատութիւններեն, իրեւ «Անակիտ» գրական հանդէսի խմբագիտ, ան ստեղծած էր գրական ամբողջ

Լուս Ամսագիր

հոսանք մը: Անոր գրական գործունեութիւնը համալրում էր Հայ դատի նույիրուած անոր առաքելութեան, որովհետեւ ցոյց տալով աշխարհին, թէ ինչպիսի բաղձր մշակոյթի տեր ազգ մըն էր հայութիւնը՝ աւելի ըմբռնելի կը դատօնար տարողութիւնը այս եղենին զոր բուրքերը հրականացուցած էին բնաջնջել շանալով նման քաղաքակիրը ազգ մը:

Բնականաբար Զօպանեանին նույիրուած հատորը ներկայացուած էր խորհրդային պայմաններուն համար ընդունելի տարազումներով: Եթէ այսօր յօրինուած ըլլար այդ հատորը՝ կարիքը պիտի չունենար գաղափարական ու գաղափարախօսական արդարացումներու:

Սակայն, այդ հատորը իր ժամանակին համար կատարեց իր դերը ոչ միայն վերականգնելով եւ Յայաստանի համար ընդունելի դարձնելով Զօպանեանին վաստակը, այլև անոր միջոցաւ նոր վերաբերում մը յարաջացնելով ամբողջ արեւմտահայ մշակոյթին եւ արժեքներուն նկատմամբ: Որոշ չափով լրացուցիչ դեր կատարած են նաեւ Դալլարեանի յուշագրութիւնները առ սփիւռք ուղղուած իր առաքելութեան մէջ:

Դալլարեան տարօրինակ վիճակի մը մատնեց Շամկավար Ազատական կուսակցութեան նտաւորականութիւնը, երբ ձեռնարկեց այդ կուսակցութեան պատմութեան երկհատորեայ գործին: Արդարեւ, ան իրեւ հայ կոնունիս ինքային դրսեւորեց իրեւ ամէնէն հմուտ անձը ՌԱԿ-ի պատմութեան: Եւ, ամկազմակերայ, գրեթ անզոյ արիխներուն ուսումնասիրութեամբ, հրապարակ հանեց այդ զոյց հատորները. Քեւ, արխիւային նիւթերու բացակայութեան կարգ մը բացրողութեներ ու թիւր մեկնաբանութիւններ ունեցան այդ զոյց հատորները, սակայն կը մնան միակ վկաները այդ կուսակցութեան պատմութեան:

Ներկայիս սփիւռքի նախարարութեան կազմութիւնը անուղակի ծանաչումն է Դալլարեանի առաքելութեան իրագործումներուն եւ աւելի հիմնաւորեալ հեռանկարներու որոնումը, պետական չափանիշներով եւ նպատակներով:

Այսօր լոյսի հեղեղներով կը յորդին երեւանեան պողոտաները, կը խայտան ցայտադիրները, եւ այն անձը, որ իր հոգիէն ու միտքն ճառագայք մը ցոլացոց պայծառ երեւանի վերեւ, լրեւայն կիշտէ անոր հողին տակ: «Ուսկի այս կամուրջը» գոր կերտած էր Դալլարեան, ոչ միայն փուլ չի գար իր թաղումով, այլ կանցնի պատմութեան աւելի հզօրանալու հեռանկարով:

Երեւան

«ԱՃԽԱՐԾԻ ՇԵՏ՝ ՄԵՐ ԻՆՔՍՈՒԹՅԱՍՄ»

Համահայկական լրատվամիջոցների ղեկավարների IV համաժողովի բանաձեւ

«Մեկ ազգ՝ մեկ մշակոյթ» համահայկական փառատոնի շրջանակներում, «Աշխարհի հետ՝ մեր ինքնությամբ» կարգախոսով Համահայկական Ը

լրատվամիջոցն երի ղեկավարների IV համաժողովը 2008 թվականի սեպտեմբերի 17-22-ը իր լիազումար նիստերի ընթացքում

քննարկելով հայ ազգային մամուլի հիմնարար խնդիրները աշխարհաքաղական նոր մարտահրավերների համատեքստում, առաջնային է համարում հայոց պետականության հետագա ամրապնդման եւ զարգացման համահայկական ազգային գաղափարախօսության



պարզաբանումն ու պրոպագանդումը, երրորդ հազարամյակուն հայ ազգային քաղաքակրթության ծեփի, աշխարհում նրա տեղի ու դերի նշանակության կանունումը:

Ժամանակակից համաշխարհայնացման անկանխատեսելի ու փոքր ազգերի համար վտանգավոր կտրուկ շղաղարձերի հորձանուտում մեր ազգային ինքնության դրսեւորումը եւ ազգային արժեքները համաշխարհային նոր որակների վերածելու համար հայապահպանման գերինդիրը հայ աշխարհի, հայ ազգի, հայոց պետականության մերօյա մարտահրավերն է եւ գոյության երաշխիքը:

Հայալեզու եւ օտարալեզու հայ մանուկը իր ամենօրյա գործունեության կարեւորագոյն խնդիրն է համարում 1915 թվականը Յայոց մեծ եղեռնը որպես համաշխարհային քաղաքակրթության նորագույն պատմության հականարդկային մեծագույն աղետի՝ որպես Ցեղասպանության ճանաչման, հայ ժողովրդի պահանջատիրության արդարացիության հիմնավոր մեկնաբանման համար միջազգային հասարակական կարծիքի ծեւավորումը ողջ աշխարհու:

Աշխարհասպիրու հայ մանուկը դեռեւս լուրջ անելիքներ ունի Արցախի իիմնահարցի հայանպաստ լուծնան, միջազգային իրավական նորմերի հիմնա վրա Արցախի ժողովրդի արդարացի ինքնորոշման իրավունքի պատմական հիմնավորման ու պարզաբանման ուղղությամբ:

Համահայկական լրատվամիջոցների ղեկավարների IV համաժողովը փաստում է, որ աշխարհի հայ մանուկը բազմադաշտան իր փորձով ու հեղինակությամբ հսկայական ներուծ եւ լրագույն ավանդույթների պահպանման, հայ ժողովրդի պատմական անցյալի, նրա հետ կապված վիճահարուց համահայկական բազում խնդիրների լուծնան գործընթացների կազմակերպման նրախուսման եւ աջակցության ուղղությամբ:

Հայալեզու մանուկի ներկայացուցիչները գիտակցում են մայրենի լեզվի անաղարտության, ազգային մշակոյթի, ժողովրդական ավանդույթների պահպանման, հայ ժողովրդի պատմական մեկնաբանման գործում մամուլի տեղի եւ դերի ողջ պատասխանատվությունը:

